



88. ԼԻՎՈԹՈՒՆ ԸՆՈՂԵՆ ՎԵՐՁԸ

Ընում ա, չնհւմ մին մարթւ էտ մարթը մին ծոն-ծմեռնը օր հոցաւը քլընհւմ վախտը տեսնում ա, վեր մին օխժը սառաժ, վեր ընդաժ: Օխժը շատ ա խընթրում էտ մարթին, վեր ցորտ ա, ինձ էս ցորտան ըզադեւ էս մարթը օխժը յոր ա օնհւմ տնհւմ ծուցումը: Մին խիլա քյնիլից ետաւ օխժը լնվ թքանում ա: Թքանում ա թա չէ, մարթին պկան փռնում ա, վեր ըսպանեւ էս մարթը շատ զալանք ա անում, վեր հորան ըսպանեւ վեչ, Օխժը ասում ա.— Լնվ, քյնի քյնինք, մին օրիշը կպտահեւ կհրցնինք, հինչ վեր կասեւ, ինդի կանինք: Մին խիլա քյնիլուց ետը մին էշ ա պտահում: էս մարթը ասում ա.— էշ ախպեր, էս օխժը սառաժ փղացաժ ա ըլնվ, խղճացալ ըմ, տրնվ ծուցումըս, մհենգլ թքացալ ա, օղում ա ինձ ըսպանեւ. մհենգլ լիվոթումը կոխ ա տամ, հինչ ա՞նինք, վեր լնվ ինի, ըսպանե՞ ինձ, թա չէ: էշը բազասխանում ա.— Լա՛, թող ըսպանեւ, մարթին խղճալ չըն: Ես լնվ, չա՛հիլ էշ վխտեա միշտ պեռնալ ըն, մաշկիս նստալ ըն, ամմա մհենգլ պըռաւալ ըմ, ինձ եշըմ չըն և պերնվ ըն էս քյաբան դնւզհւմը պեց թողալ, վեչ ուտիլի կա, վեչ խմիլի, մին կյոնչ էլա կավեչ, վեր կլն ինձ օտեւ, հոքիս ըզադեւ էշին ասաժ խոսկանը ետը մարթը օխժան խնթրում ա, վեր մին օրիշը քթենան և ընդրանա էլ հրցնին: Միկա էլ քյնհւմ ըն, մին լղար կաւ ա պտահում: էս մարթը կվեն հրցնում ա.— Կաւ քույրիկ, էս օխժին ըզադալ ըմ, մհենգլ լիվոթումըս կուրցնում

ա և օգուժ ա ինձ ըսպանե՛, հինչ կա՞սիս, ըսպանե՛, թա պահե՛
կա՛վը ասըմ ա.—Հալճ ըսպանած էլ բիղմոր, ընդրա համար, վե՛ր
ես ջնհիլ վխտիս էրկու քթեշ կաթն ըմ տվալ, մհենգյ պռաժալ ըմ,
լղարալ և հալճ մեսս էլ ուտելի շի, հատե՛, պերանլ ըն ըստեղ պեց
թողալ, տրոթուն չըն անըմ:

Մարթը նորն ա խնթրում, վեր մին օրիշն էլ քթենան, նրան
էլ հրցնին: Օխժը ասըմ ա՝ լնվ կինի: Շատ ըն քյնոն, խրեգյ ըն
քյնոն, մին աղվես ա ջհոյմ: Հս մարթը ուրան դանդը մին-մին
նաղլ ա անըմ ինդի, հունցու էշին և կվեն ա պատմալ: Աղվեսը
ասըմ ա.—Ա՛յ մարթ, էտ օխժը հիշտեղ ա՛ ըլնալ: Մարթը ասըմ
ա:—Էն ա ըլնալ Հս պիծի քսակեն մաշին պլնրված, սառած-
փղանցած, հղըցը վեր ընգած: Աղվեսը ասըմ ա.—Ստտ կինի,
էտ մեծ օխժը էտ պիծի քսակըմը տղվարվել շի, թող նի մենե
քսակը, տեսնամ աշկաժս և սուղս անիմ: Աղվեսն ասըմ ա
թա շէ, օխժը նի յա մենոս քսակը: Նի յա մենոս թա շէ,
աղվեսը մարթին ասըմ ա.—Արա ճելլ ըրա քսակեն պիրանը կապե՛:
Մարթը քսակին պիրանը կապում ա: Աղվեսը մարթին ասըմ ա.—Ա-
րա՛, այ սարսաղ, հետե մահակը վերցրու, թակն ըսպանե՛: Մարթը
մահակը յոր ա օնում, օխժին թակըմ, ըսպանըմ: Ըսպանըմ ա թա
շէ, մարթը աղվեսին ասըմ ա.—Աղվես ախպե՛ր, քեզ հինչ լիվոթուն
անիմ, վեր ինձ Հս կրական ըղղեցե՛ր: Աղվեսը բաղասխանըմ ա.—
Քղանա վեշ մին պեն օգում չըմ, միայն հանե՛, իմ պոնըս էն քո-
լին տակեն խոր ծակն ա, վեր կարիս, միկա հաց, վեսկեռ պեր քցի
ծակեն առաշը, ես տոն կկյամ կօտիմ, յուա քյնիմ մինչև ծոնը
հալի, էլլհա կքյնիմ, հա՛վա պենն կճարիմ, ապրիմ:

Մարթը միկա քյնոն ա, տեսնըմ մին օվլի թնվանդը ծեր-
փեն, թազին հետան կյամ ա: Էտ մարթը ասըմ ա.—Արա օվլի, հա-
նե՛ էն քոլեն տակեն ծակըմը մին աղվես կա, քյնի մին թոխուր էլ,
միկա քաքուռ էլ պեր, թոխրավը քանդի, քաքուռն էլ ծակեն մաշին
մոլ տոք, մին լնվ աղվես կա, փունե, ամմա վեր փունիս մորթեն
մաշկիս ծախիս, հանց ըրա մին պեն է: Ինձ տաս: Հս օվլին հըրց-
նում ա.—Էտ հինչ ա՛ղվես ա, վեր իտի տեղը լնվ գյնոնըմ ըս:
Հս նալինսափը ըսկըբան մինչև վերչը հինչ վեր ըլնալ ա, օվլուն
պատմում ա:

Հս պատմածը օվլին ըսկանըմ ա թա շէ, ասըմ ա.—Սս կարել
չըմ էտքան լիվոթուն անողեն, կյանք ըղղողեն ըսպանիմ, ամմա
վեր տու էտչանք լիվոթուն կուրցնող ըս, քեզ կարող ըմ ըղվեսին
նվնդ սաթկացնեմ: Ասըմ ա պրծնում, թնվանդը փորեն օնում,
խփում սաթկացնում: